ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **31.07.2025թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2025 թվականի հուլիսի 29-ի N 04-Լ որոշմամբ Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրեր ուժը կորցրած ճանաչելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելուն հավանություն տալու, Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությունը և կատարողականի գնահատումը հաստատելու, Տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածում առկա ազատ միջոցներից 20 մլն. ՀՀ դրամը ՀՀ Կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելու նպատակով 2025 թվականի հուլիսի 30-31-ը ներառյալ անցկացվեց արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրեր ուժը կորցրած ճանաչելուն և քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերին:

3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատականը:

4. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված Կրթության տեսչական մարմնի հետ) «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածում առկա ազատ միջոցներից նվազեցված 20 մլն. ՀՀ դրամը Կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն:

5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվություն:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան - ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժ. Խառատյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Օ. Աբրահամյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Հ. Լիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող

Քվեարկությանը չեն մասնակցել՝
Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությունը համարվում է կայացած:
Քվեարկության արդյունքում.
1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Ժ. Խառատյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Օ. Աբրահամյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Հ. Լիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **8 կողմ, 0 դեմ:**
Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրեր ուժը կորցրած ճանաչելուն և քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերին:

3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատականը:

4. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված Կրթության տեսչական մարմնի հետ) «4111 «Աշխատողների աշխատավարձեր

և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածում առկա ազատ միջոցներից նվազեցված 20 մլն. ՀՀ դրամը Կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն:

5. Ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ